# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 30 հունվարի 2009թ.

Երկու հազար ինը թվականի հունվարի երեսունին

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ, հետագայում՝ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ի դեմս տնօրեն Աստղիկ Ստեփանյանի մի կողմից, և քաղաքացիներ՝ Սերգեյ Սարինյանը, Հենրիկ Բախչինյանը, Ժենյա Քալանթարյանը և Դավիթ Գասպարյանը հետագայում՝ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ հանձնում են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ իրենց հեղինակած «Հայ գրականություն-10», «Հայ գրականություն-11», «Հայ գրականություն-12», դասարանների դասագրքերի և «Հայ գրականություն-10-12. Ուսուցչի ձեռնարկի» (հետագայում ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ), տպագրման և իրացման բացառիկ իրավունքը՝ պայմանագրի ստորագրման օրից 10 (տաս) տարի ժամկետով:

2. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ պարտավորվում են «Հայ գրականություն-10» դասագրքի 60%-ը, «Հայ գրականություն-11» դասագրքի 30%-ը, «Հայ գրականություն-12» դասագրքի 20%-ը, և «Հայ գրականություն-10-12. Ուսուցչի ձեռնարկի»՝ 60%-ը, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ ներկայացնել պատշաճ տեսքով՝ մինչև 2009թ. փետրվարի 28-ը:

3. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ երաշխավորում են ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ, որ երրորդ անձանց իրավունքներն իրենց կողմից չեն խախտվել:

4. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի և ձեռնարկի հրատարակչական իրավունքը պայմանագրի գործողության ընթացքում պատկանում է ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ: ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ իրավունք չունեն տրամադրելու դրանք որևէ այլ հրատարակության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

4.1. Հրատարակչական իրավունքը տարածվում է նաև ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ հետագա հեղինակային այն նյութերի վրա, որոնք ներկա պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերի և ձեռնարկի օրգանական շարունակությունը կամ մասն են հանդիսանալու և, բնականաբար, չեն կարող հանձնվել որևէ այլ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ:

4.2. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձի տրվելու ենթակա չեն:

5. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ պարտավորվում են սույն մրցույթի շրջանակներում պայմանագրի առարկա դասագրքի և ուսուցչի ձեռնարկի ստեղծման հետ կապված չհամագործակցել այլ հրատարակչությունների հետ:

6. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ իրավունք չունի առանց ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ համաձայնության որևէ փոփոխություն կատարել ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ կամ դրանց անվան մեջ կամ փոխել ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ անունները:

7. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է չխախտել ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ անձնական իրավունքները, այն է՝ անվան իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը, կեղծանունով հրատարակելու իրավունքը:

8. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ պարտավորվում է դասագրքերից յուրաքանչյուրի համար ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ վճարել հոնարար՝ ըստ փաստացի տպաքանակների, այդ մասին նրանց հետ կնքելով լրացուցիչ պայմանագիր: Վճարվելիք հոնարարը կկազմի իրացված գրքերի գնի 10%-ը՝ հրատարակման և յուրաքանչյուր վերահրատարակման համար: Վճարումը կատարվելու է դասագրքերը տպագրելուց և ՀՀ մարզեր առաքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

8.1. Հեղինակային վարձատրությունը (ռոյալթի) բաշխվում է հեղինակ
անդամների միջև՝ ըստ փաստացի տպագրված ծավալի:

9. Հոնարարից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերն ու
կատարվում են ՀՐԱՏԱՐԿՉՈՒԹՅԱՆ կողմից:

10. ՀԱՐԱՏԱՐԿՉՈՒԹՅՈՒՆԸ ապահովում է ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
հրատարակված օրինակի վրա հեղինակային իրավունքի մասին ծանու
տեղադրումը՝ ©, հեղինակների անվան և առաջին հրատարակության տարեթվի

10.1. Դասագրքերի կազմին և անվանաթերթիկին հեղինակների ազգանուն
են սույն պայմանագրի 8.1 կետում նշված հերթականությամբ:

11. Պայմանագիրը գործում է 10 (տասը) տարի ժամկետով՝ կնքման պահից

12.Վեճեր առաջանալու դեպքում հարցը կարգավորվում է ՀՀ օրեն
համաձայն:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

**ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ,
Երևան-9, Տերյան-91,
Հ/հ 163038104309 ՀԷԿԲ
Մյասնիկյանի շրջ. բաժանմունք

ՏԼՈՐԵ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

**ՀԵՂԻՆԱԿՆԵՐ**

Երևան, Գյուլբենկյան 42 շ.,
անձնագիր՝ AA 0522539
տրված՝ 004-ի կողմից, 09.0

Ս. ՍԱՐԻՆ

Երևան, Ն. Ստեփանյան 18
անձնագիր՝ AA 0619926
տրված՝ 005-ի կողմից, 25.

Ժ. ՔԱԼԱՆԹ

Երևան, Ն. Ադոնցի 13 շ., 32
անձնագիր՝ AA 0454855
տրված՝ 004-ի կողմից, 20.

Գ. ԳԱՍՊԱՐ

Երևան, Էստոնական 7 շ., 9
անձնագիր՝ AA 0378079
տրված՝ 012-ի կողմից, 11.

Հ. ԲԱԽՉԻՆ